ՁԵՌՆԱՐԿ

Զինծառայողների քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին



Արմեն Գրիգորյան

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

ՁԵՌՆԱՐԿ

Զինծառայողների քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին

Արմեն Գրիգորյան

Եվրոպայի խորհուրդ

«Զինծառայողների քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» ձեռնարկի տպագրությունն իրականացվել է «Մարդու իրավունքները և կանայք Հայաստանի զինված ուժերում -II փուլ» ծրագրի շրջանակներում: «Մարդու իրավունքները և կանայք Հայաստանի զինված ուժերում - II փուլ» ծրագիրն իրականացվում է Եվրոպայի խորհրդի՝ Հայաստանի համար իրականացվող գործողությունների 2019-2022 թթ. ծրագրի շրջանակում: Գործողությունների ծրագիրը ֆինանսավորում են Գերմանիան, Իռլանդիան, Լիխտենշտայնը, Նորվեգիան և Շվեդիան:

Լայնածավալ մարտահրավերների և բազմակող ծրագրերի իրականացման վարչություն

Մարդու իրավունքների և իրավունքի գերակայության գլխավոր տնօրինություն

Եվրոպայի խորհուրդ
F-67075 Ստրասբուրգ, Սեդեքս
www.coe.int

Սույն ձեռնարկում արտահայտված տեսակետները հեղինակինն են և պարտադիր չէ, որ արտացոլեն Եվրոպայի խորհրդի պաշտոնական քաղաքականությունը:

Սույն փաստաթղթի ամբողջական կամ մասնակի վերարտադրման կամ թարգմանության հետ կապված բոլոր հարցերը պետք է ուղղվեն Հաղորդակցության և կապի հարցերով տնօրինությանը (F-67075 Strasbourg Cedex կամ publishing@coe.int):
Այս հրապարակման հետ կապված բոլոր մյուս հարցադրումները պետք է ուղղվեն Մարդու իրավունքների և իրավունքի գերակայության գլխավոր տնօրինության Լայնածավալ մարտահրավերների և բազմակողմ ծրագրերի իրականացման վարչությանը (DGI-HRImplementation@coe.int):

Էջադրումը՝ «ԹԱՍԿ» ՍՊԸ-ի, Time to print տպարան

Գրքի կազմի և էջերի լուսանկարները տրամադրել է © Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը

Եվրոպայի խորհրդի հրատարակություն
© Եվրոպայի խորհուրդ, նոյեմբեր, 2021 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Ներածություն	5
1.	Կյանքի իրավունք	9
2.	Խոշտանգման, անմարդկային, նվաստացուցիչ վերաբերմունքի կամ պատժի արգելք	15
3.	Պարտադիր կամ հարկադիր աշխատանքի արգելք	23
4.	Ազատության և անձեռնմխելիության իրավունք	29
5.	Գործի արդար քննության իրավունք	35
6.	Մասնավոր և ընտանեկան կյանքի, բնակարանի և հաղորդակցության նկատմամբ հարգանքի իրավունք	43
7.	Մտքի, խղճի և դավանանքի ազատության իրավունք	49
8.	Արտահայտվելու ազատության իրավունք	55
9.	Միավորումներ կազմելու և դրանց անդամակցելու, ընտրելու և ընտրվելու իրավունք	59
10.	Խտրականության արգելք	65
11.	Ամփոփում	69

Ներածություն

Սույն ձեռնարկի նպատակն է բացահայտել «առաջին սերնդի» մարդու իրավունքների իմաստը զինվորական ծառայության համատեքստում: Ձեռնարկում թվարկված և բացատրված են զինծառայողների հիմնարար իրավունքները՝ ըստ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և միջազգային պայմանագրերի: Յուրաքանչյուր իրավունքի ներքո բերված են հենց զինվորական ծառայությանը վերաբերող օրինակներ՝ դրանք առավել մատչելի ու հասկանալի դարձնելու համար:

Ձեռնարկը մշակվել է «համազգեստով քաղաքացի» տեսության հիման վրա: Այս տեսությունը ենթադրում է, որ զինծառայողները, ինչպես այլ քաղաքացիները, ունեն նույն իրավունքները և ազատությունները՝ որոշ սահմանափակումներով, որոնք բխում են հենց զինվորական կյանքի առանձնահատկություններից: «Զինծառայող» հասկացությու-

նը ներառում է թե՛ պարտադիր ժամկետային, և թե՛ պայմանագրային զինծառայողներին: Այսինքն՝ այս երկու խումբ զինծառայողներն էլ ունեն բոլոր իրավունքները և ազատությունները:

Դրա հետ մեկտեղ հրամանատարները՝ որպես զինծառայող, ևս ունեն նույն իրավունքները, իսկ որպես վերադաս՝ նաև հանդես են գալիս պետության անունից և պատասխանատու են իրենց ենթակաների իրավունքների պաշտպանության համար:

Ձեռնարկը օգտակար է զինված ուժերում ծառայող պարտադիր և պայմանագրային զինծառայողների, զորակոչիկների, նրանց ընտանիքի անդամների, հրամանատարական կազմի, զինվորական ոլորտի իրավապահ ծառայողների և ընդհանրապես, զինված ուժերում մարդու իրավունքներով հետաքրքրվող մարդկանց համար:

Ձեռնարկի նպատակն է բարձրացնել հանրության, առաջին հերթին՝ զինծառայողների իրազեկությունը մարդու իրավունքների վերաբերյալ՝ նպաստելով Հայաստանի զինված ուժերում մարդու իրավունքների առավել արդյունավետ պաշտպանությանը, մարդու իրավունքների խախտումների կանխմանը:

ԿՅԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔ

Կյանքի իրավունք

Զինծառայողներն ունեն կյանքի իրավունք: Զինծառայությունը հենց իր բնույթով արդեն իսկ առավել վտանգավոր է, քան քաղաքացիական կյանքը: Զինծառայողները հաճախ վտանգում են իրենց կյանքը՝ իրենց խնդիրներն ու առաջադրանքները կատարելու համար:

Զինվորական ծառայության ընթացքում պետությունն առավել ևս պետք է հոգ տանի քաղաքացիների կյանքի մասին:

Բանակում պետության ներկայացուցիչները հրամանատարներն են՝ որպես պետական պաշտոնյաներ:

Պետությունը, այսինքն՝ հրամանատարը, առաջին հերթին պետք է ձեռնարկի բոլոր հնարավոր միջոցները՝ զինծառայողի մահվան վտանգը նվազագույնի հասցնելու համար:

Այս նպատակով հրամանատարությունը պարտավոր է զինծառայողներին տրամադրել.

- բավարար սնունդ, հագուստ,
- որակյալ բժշկական օգնություն,
- անվտանգ պայմաններ՝ զերծ ֆիզիկական և հոգեբանական ճնշումներից, վարակիչ կամ այլ հիվանդություններից,
- ռազմական հանդերձանք, օրինակ՝ զրահաբաճկոն, սաղավարտ, գիշերային տեսանելիության կամ ջերմատեսիլ սարք, հակագազ և այլն:

Իհարկե, մարտական հերթապահության, հատուկ առաջադրանքների ժամանակ կյանքին սպառնացող վտանգն ավելի մեծ է: Հետևաբար՝ այս դեպքում անհրաժեշտ են առավել լուրջ պաշտպանության միջոցներ: Ամեն դեպքում վտանգները լիովին բացառել անհնար է:

Ուստի հրամանատարները պարզապես պետք է կոնկրետ իրավիճակում և պայմաններում անեն իրենցից կախված ամեն ինչ, որպեսզի զինծառայողների կյանքը առավել մեծ վտանգի տակ չդրվի, եթե հնարավոր է այդ վտանգից խուսափել կամ այն նվազեցնել:

Զինծառայողի մահվան (սպանություն, ինքնասպանություն) ցանկացած դեպքում պետությունը պարտավոր է արդյունավետ քննություն կատարել՝ պարզելու համար մահվան պատճառը, հանգամանքները և մեղավորներին: Այս պարտականությունները կրում են իրավապահները՝ ռազմական ոստիկանները, զինվորական քննիչները, դատախազները և դատարանները:

Իրավապահները պետք է զինծառայողի մահվան դեպքի քննությունը կատարեն.

անկախ.
այսինքն՝ նրանք չպետք է որևէ կերպ շահագրգռված կամ կաշկանդված լինեն,

արագ.
որպեսզի կարևոր ապացույցները չոչնչանան, և քննությունը անտեղի երկար չտևի,

մանրակրկիտ.
որպեսզի ոչ մի կարևոր փաստ չմնա անհայտ կամ անհասկանալի,

հրապարակային.
որպեսզի առնվազն մահացած զինծառայողի հարազատները տեղյակ լինեն քննության ընթացքի և արդյունքի մասին:

Խիստ բացառիկ դեպքերում զինծառայողին կյանքից զրկելը կարող է լինել իրավաչափ.

անհրաժեշտ պաշտպանություն.
եթե զինծառայողի արարքների հետևանքով վտանգվում է այլ մարդկանց (զինծառայողների) կյանքը, և միայն նրան կյանքից զրկելով կարելի է նրան վնասազերծել, փրկել այլ մարդկանց կյանքը,

ծայրահեղ անհրաժեշտություն.
եթե զինծառայողի կյանքը պետք է զոհաբերել՝ ավելի մեծ թվով մարդկանց (զինծառայողների) կյանքը փրկելու համար, և չկա նրանց փրկելու ոչ մի այլ տարբերակ:

ԽՈՇՏԱՆԳՄԱՆ, ԱՆՄԱՐԴԿԱՅԻՆ, ՆՎԱՍՏԱՑՈՒՑԻՉ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ԿԱՄ ՊԱՏԺԻ ԱՐԳԵԼՔ

Խոշտանգման, անմարդկային, նվաստացուցիչ վերաբերմունքի կամ պատժի արգելք

Զինծառայողներն իրավունք ունեն զերծ լինել խոշտանգումից, անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքից կամ պատժից:

Այս իրավունքը բացարձակ իրավունք է. դա նշանակում է, որ զինծառայողի հանդեպ խոշտանգումը, անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքը կամ պատիժը ոչ մի պարագայում չեն կարող լինել թույլատրելի: Այսինքն՝ ինչ արարքներ էլ զինծառայողը կատարի, թեկուզև՝ անօրինական (հանցանք կամ զանցանք), իրավապահները և հրամանատարները չեն կարող նրան խոշտանգել, անմարդկային կամ նվաստացուցիչ ձևով վերաբերվել նրան կամ այդ կերպ պատժել:

Ինչպես և կյանքի իրավունքի պաշտպանության դեպքում, խոշտանգումներից, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից կամ պատժից պաշտպանելու դեպքում ևս պետությունը պետք է՝

1. ձեռնարկի բոլոր հնարավոր միջոցները՝ դրանք կանխելու համար,
2. եթե դրանք արդեն տեղի են ունեցել, արագ, արդյունավետ և մանրակրկիտ քննություն կատարի՝ պատճառները և մեղավոր անձանց բացահայտելու, նրանց պատժելու համար:

Պետությունը պարտավոր է ձեռնարկել բոլոր միջոցները, որ զինծառայողը բանակում ապրի ֆիզիկական և հոգեբանական ճնշումներից, վտանգներից և վնասներից զերծ, արժանապատիվ միջավայրում:

Կարևոր է նշել, որ զինվորական ծառայությունը ենթադրում է որոշակի ֆիզիկական և հոգեբանական դժվարություններ ծառայողների համար: ***Դրանք են, օրինակ, ծանր ֆիզիկական պատրաստության պարապմունքները, երկարատև մարտական վարժանքները (նաև՝ վատ եղանակային պայմաններում, մի քանի ժամ առանց սննդի), համեմատաբար երկար ժամանակով նույն տեղում գտնվելն ու հարազատների հետ չշփվելը և այլն: Բայց սրանք թույլատրելի և ընդունելի դժվարություններ են,*** քանի որ դրանք կապված են բուն զինծառայության խնդիրների հետ և նպատակ ունեն պատրաստելու զինծառայողին իր պարտականությունները լիարժեք, վստահ և ճշգրիտ կատարելուն: Այսինքն՝ ***որքան էլ դրանք ֆիզիկապես և հոգեբանորեն ծանր լինեն, դա խոշտանգում, անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունք չէ*** (ընդհանուր տերմինով՝ վատ վերաբերմունք):

Վատ վերաբերմունքը կարող է տեղի ունենալ զինվորական ծառայության վայրերում (զորամաս, զորավարժարան, մարտական հենակետ և այլն), ինչպես նաև զինվորական ծառայության վայրերից դուրս (ռազմական ոստիկանության բաժին, քննչական բաժին կամ ցանկացած այլ վայր): Համապատասխանաբար՝ զինծառայողի նկատմամբ վատ վերաբերմունք կարող են դրսևորել թե՛ այլ զինծառայողները՝ ստորադասները, հավասարակիցները և վերադասները, և թե՛ իրավապահները՝ ոստիկանները, քննիչները, դատախազները և այլն:

Պետությունը պետք է ամեն կերպ կանխի զինծառայողի հանդեպ վատ վերաբերմունքը ցանկացած վայրում և ցանկացած անձի կողմից:

Վատ վերաբերմունքը զինծառայողին ֆիզիկական կամ հոգեբանական ցավ պատճառելն է, որը պետք է որոշակի աստիճանի լինի, որպեսզի դառնա դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունք կամ պատիժ:

Վատ վերաբերմունքը գնահատելիս պետք է հաշվի առնել մի շարք հանգամանքներ, այդ թվում՝ վերաբերմունքի բնույթը, միջոցներն ու մեթոդները, տևողությունը, տեղը, այլ մարդկանց ներկայությունը, արարքի հետևանքները զինծառայողի վրա, նրա սեռը, տարիքը, առողջական վիճակը և այլն:

Նվաստացուցիչ վերաբերմունք կամ պատիժ

հետևանք՝ վախի, ճնշվածության, ստորացվածության, ընկճվածության զգացումներ, քերծվածքներ կամ այլ թեթև վնասվածքներ

Անմարդկային վերաբերմունք կամ պատիժ

հետևանք՝ ֆիզիկական կամ հոգեբանական տառապանք, վնասվածքներ, արյունազեղումներ, վերքեր և այլն, ֆիզիկական կամ հոգեբանական հյուծվածություն կամ հիվանդություն,

Խոշտանգում

հետևանք՝ սաստիկ ֆիզիկական տանջանքներ, հոգեբանական ծանր ապրումներ, մարմնական ծանր վնասվածքներ, հոգեկան խանգարումներ

Օրինակ, հրամանատարի կողմից զինծառայողի հետ վիրավորական կատակներ անելը՝ նպատակ ունենալով ստորացնել զինծառայողին, կամ օրինակ, նորակոչիկ զինծառայողին, որ դեռ չի հարմարվել ծառայության պայմաններին, թեկուզ մեկ անգամ հրապարակայնորեն ծաղրելը, հայհոյելը ստուգատեսի ժամանակ, երբ ողջ զորամիավորումը շարված է հրապարակում, կլինի ***նվաստացուցիչ վերաբերմունք*** նրա նկատմամբ:

Զինծառայողին ծանր զորավարժության ժամանակ առավոտյան և կեսօրի սննդից զրկելը, օրվա ընթացքում չափից շատ և ծանր ֆիզիկական աշխատանք հանձնարարելը, արևի տակ կամ սառնամանիքին երկար ժամանակով կանգնեցնելը կլինեն ***անմարդկային վերաբերմունք կամ պատիժ***: Իսկ, օրինակ, զինծառայողին դաժանաբար ծեծելը, լուրջ մարմնական վնասվածքներ հասցնելը, ֆիզիկական տանջանքների ենթարկելը, կամ հոգեբանական խնդիրներ ունեցող զինծառայողին ռազմական ոստիկանության մեկուսարանում մի քանի օր մթության մեջ պահելը և նրան ու նրա ընտանիքին վնասելու սպառնալիքներ տալը, որի հետևանքով նա ձեռք է բերել հոգեկան խանգարում, կլինեն ***խոշտանգում*** նրա նկատմամբ:

Խոշտանգումը, անմարդկային, նվաստացուցիչ վերաբերմունքը կամ պատիժը զինծառայողի հանդեպ հանցագործություններ են:

Նմանատիպ ցանկացած դեպքի մասին պետք է հայտնել իրավապահներին, թեկուզ՝ անանուն.

Ռազմական ոստիկանություն,
եթե դա կատարվել է այլ զինծառայողների, հրամանատարների կողմից,

Ազգային անվտանգության ծառայություն,
եթե դա կատարվել է ռազմական ոստիկանների, քննիչների, դատախազների կամ դատավորների կողմից,

Մարդու իրավունքների պաշտպանին
կարելի է հայտնել բոլոր դեպքերում:

ՀԻՇԵ՛Ք՝

Ձեր կամ Ձեր ծառայակից ընկերների հանդեպ բռնությունների մասին չհայտնելը, դրանք գաղտնի պահելը կարող են հանգեցնել մահվան (այդ թվում՝ ինքնասպանության) կամ անվերականգնելի, անբուժելի ֆիզիկական ու հոգեկան վնասների ու այլ խնդիրների:

Իրավապահները պարտավոր են արագ, անկողմնակալ, մանրամասն քննել խոշտանգման, անմարդկային, նվաստացուցիչ վերաբերմունքի կամ պատժի ցանկացած դեպք, բացահայտել և պատժել մեղավորներին:

ՊԱՐՏԱԴԻՐ ԿԱՄ ՅԱՐԿԱԴԻՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐԳԵԼՔ

Պարտադիր կամ հարկադիր աշխատանքի արգելք

Արգելվում է մարդուն պարտադրել, հարկադրել կատարել որևէ աշխատանք:

Պարտադիր կամ հարկադիր աշխատանքը մարդուն, հակառակ նրա կամքին և առանց նրա համաձայնության, ինչ-որ աշխատանք անել ստիպելն է:

Ստրկությունը հարկադիր կամ պարտադիր աշխատանքի ամենածանր տեսակն է, որի դեպքում մարդը համարվում է ինչ-որ մեկի սեփականությունը, անվերապահորեն կատարում է նրա բոլոր հրահանգները՝ դրա դիմաց չստանալով որևէ վճար կամ ստանալով չնչին վճար (կամ ուղղակի գոյատևման նվազագույն միջոցներ՝ սնունդ, կացարան և այլն): Էական է այն, որ ստրկության մեջ մարդն այնպիսի վիճակում է, որ որևէ կերպ չի կարող հրաժարվել իր «տիրոջ» պահանջները կատարելուց կամ հակադրվել նրան:

! **ՍՏՐԿՈՒԹՅՈՒՆԸ ցանկացած պայմաններում լիովին ԱՐԳԵԼՎՈՒՄ Է՝ առանց որևէ բացառության:**

Պարտադիր կամ հարկադիր աշխատանք ՉԵՆ.

- պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունը,
- պարտադիր այլընտրանքային ծառայությունը,
- դատարանի դատավճռով հանցագործության համար որպես պատիժ նշանակված հանրային աշխատանքները,
- տարերային աղետների հետևանքների վերացմանն ուղղված աշխատանքները:

Թեև զինվորական կամ այլընտրանքային ծառայությունը չեն համարվում պարտադիր կամ հարկադիր աշխատանք, սակայն դա չի նշանակում, որ ժամկետային կամ այլընտրանքային ծառայողները պետք է կատարեն իրենց տրվող ցանկացած հրաման: ***Զինծառայողները և այլընտրանքային ծառայողները պարտավոր են կատարել ՄԻԱՅՆ այն աշխատանքը, որը կապված է իրենց ծառայության խնդիրների ու նպատակների հետ և բխում է դրանցից:***

Սա նշանակում է, որ ծառայողները իրավունք ունեն ՉԿԱՏԱՐԵԼՈՒ հրամանատարների անձնական բնույթի պահանջները կամ հրամանները, օրինակ՝ իրենց տանը ինչ-որ աշխատանքներ կատարել, այլ ծառայողների պարտականությունները կատարել և այլն:

Ինչ վերաբերում է պայմանագրային զինծառայողներին, ապա նրանք ինքնակամ են անցնում ծառայության և ստանում աշխատավարձ՝ ի տարբերություն պարտադիր ծառայողների: Սակայն պայմանագրային զինծառայողները ևս պետք է պաշտպանված լինեն հարկադիր կամ պարտադիր աշխատանքից: Նրանց համար աշխատանքը կլինի հարկադիր կամ պարտադիր, եթե, օրինակ՝

- պայմանագրի ժամկետի ավարտից հետո նրանց չզորացրեն և ստիպողաբար պահեն ծառայության,
- մինչև պայմանագրի ժամկետի ավարտը նրանց զորացրվելու ցանկության դեպքում պարտադրեն վճարել շատ ավելի մեծ գումար, քան նրանց ուսման և կեցության ծախսերն են,
- առանց հավելավճարների ստիպեն ամեն օր աշխատել չափազանց երկար (արտաժամյա):

Ամեն դեպքում պետք է նկատի ունենալ, որ զինծառայությունը սովորական աշխատանք չէ, և ***բացառիկ դեպքերում*** ծառայողները կարող են ստիպված լինել օրվա ընթացքում ավելի երկար աշխատել (օրինակ՝ հույժ կարևոր առաջադրանք կատարելիս) կամ նույնիսկ պայմանագրի ժամկետից հետո մնալ ծառայության (օրինակ՝ մինչև նույն մասնագիտությամբ այլ զինծառայողով փոխարինվելը), բայց, միևնույն է, ***դա չպետք է չափազանց երկար ժամանակ տևի, և պետությունը պարտավոր է արագ միջոցներ ձեռնարկել՝ զինծառայողներին հանգստի և/կամ փոխարինվելու հնարավորություն տալու համար:***

4

ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Ազատության և անձեռնմխելիության իրավունք

Զինծառայողներն ունեն ազատության և անձեռնմխելիության իրավունք: Զինվորական ծառայության ընթացքում թեև քաղաքացին չի կարող ցանկացած ժամանակ գնալ իր ցանկացած վայր, սակայն դա ազատության սահմանափակում չէ: Ծառայության ընթացքում որոշակի տեղում (օրինակ՝ զորամասում, մարտական հենակետում) գտնվելու և այնտեղ մնալու պահանջը բնական է, քանի որ բխում է զինծառայության նպատակներից:

Զինծառայողին կարելի է ազատությունից զրկել միայն հատուկ դեպքերում, որոշակի նպատակներով և կարգով:

Զինծառայողին ազատությունից զրկելու տեսակներն են.

1. Ձերբակալելը (բերման ենթարկելը)

պատճառը՝ հանցանք կատարելու կասկած,

նպատակը՝ կանխել հանցագործությունը կամ հանցագործությունից հետո նրա փախուստը՝ դատարան տանելու համար,

պաշտոնատար անձը՝ ռազմական ոստիկան, քննիչ, զինվորական դատախազ:

Ձերբակալումը կարող է տևել **առավելագույնը 72 ժամ** (3 օր), որից հետո զինծառայողը կա՛մ պետք է կալանավորվի, կա՛մ ազատ արձակվի: Հանցանք կատարելու կասկածանքով զինծառայողին հարկադրաբար իրավապահ մարմին տանելը **բերման ենթարկելն** է, որը կարող է տևել **առավելագույնը 4 ժամ**, որից հետո զինծառայողը կա՛մ պետք է ձերբակալվի, կա՛մ ազատ արձակվի:

Երբ զինծառայողը տարվում է ռազմական ոստիկանության, քննչական բաժին կամ կայազորի դատախազություն, այսինքն՝ **զրկվում է ազատությունից, նա իրավունք ունի.**

- անհապաղ տեղեկանալ իրեն ազատությունից զրկելու պատճառի մասին, այդ թվում՝ այն հանցանքի, որի կատարման մեջ նա կասկածվում է,
- ստանալ իրավաբանական օգնություն, այդ թվում՝ փաստաբանի կողմից խորհրդատվություն,
- լռելու, այսինքն՝ չտալու որևէ բացատրություն կամ ցուցմունք:

Իրավապահները պարտավոր են չխախտել այս իրավունքները, և եթե նրանք զրկեն զինծառայողին այս իրավունքներից, ապա ազատությունից զրկելը կլինի անօրինական:

2. Կալանավորելը

պատճառը՝ հանցանք կատարելու կասկած,

նպատակը՝ ապահովել զինծառայողի պատշաճ վարքագիծը հանցագործության քննության ընթացքում, այսինքն՝ **կանխել**.

- նրա փախուստը,
- նրա կողմից հանցանքի կատարումը,
- նրա կողմից քննությանը խանգարելը՝ տուժողին, վկային կամ այլ անձանց ճնշելը, ապացույցները թաքցնելը կամ ոչնչացնելը:

պաշտոնատար անձը՝ դատավոր:

Կալանավորելը (նախնական կալանք) ամենախիստ միջոցն է՝ զինծառայողի պատշաճ վարքագիծն ապահովելու համար: Այն կարող է տևել **առավելագույնը 2 ամիս,** և այս ժամկետը կարող է երկարացվել ***ՄԻԱՅՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՄԱՄԲ:***

3. Ազատազրկելը

պատճառը՝ հանցանք կատարելը,

նպատակը՝ զինծառայողի ուղղումը պատժի միջոցով,

պաշտոնատար անձը՝ դատավոր:

Կարգապահական խախտումների համար զինծառայողին ազատությունից զրկելն ԱՐԳԵԼ ՎՈՒՄ Է:

Ազատազրկումը պատժի տեսակ է, որը նշանակվում է հանցագործության համար մեղավոր ճանաչված զինծառայողի նկատմամբ՝ բացառապես դատարանի դատավճռով: Ազատազրկման նվազագույն ժամկետը 3 ամիս է, իսկ առավելագույնը՝ 20 տարի:

Զինծառայողին ազատությունից զրկելու իրավունք չունեն ո՛չ հրամանատարը, ո՛չ ծառայակիցները (օրինակ՝ որևէ տեղ փակի տակ պահել): Բացառիկ դեպքերում, **եթե զինծառայողի գործողությունները վտանգավոր են այլ զինծառայողների կյանքի կամ առողջության, պետական անվտանգության համար,** ապա հրամանատարը կարող է *կարճ ժամանակով* նրան զրկել ազատությունից՝ մինչև իրավապահ մարմինների ժամանելը:

Զինծառայության մեջ որոշ կարգապահական միջոցներ կարող են թեև խստացնել ծառայողի օրվա կարգացուցակը, բայց **դրանք ազատությունից զրկում չեն համարվում**: Օրինակ՝ կարգապահական վաշտ ուղարկելը ազատությունից զրկում չէ, այլ զինծառայությանը հատուկ միջոց է, որը նպատակ ունի առավել խիստ ծառայության ռեժիմի միջոցով փոխել զինծառայողի վատ վերաբերմունքը զինվորական կարգապահական կանոնների հանդեպ:

ԳՈՐԾԻ ԱՐԴԱՐ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Գործի արդար քննության իրավունք

Զինծառայողներն ունեն գործի արդար քննության իրավունք՝ իրենց վերաբերող քրեական, քաղաքացիական և վարչական հարցերով:

Զինծառայողներն առաջին հերթին ունեն դատարան դիմելու իրավունք: Ինչպես քաղաքացիական անձինք, այնպես էլ զինծառայողները կարող են դիմել **քաղաքացիական գործեր** քննող (Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան) և **վարչական գործեր** քննող (Վարչական դատարան) դատարաններ:

Քաղաքացիական գործերը մասնավոր անձանց միջև վեճերն են՝

- ֆիզիկական անձանց միջև,
- ֆիզիկական անձանց և կազմակերպությունների միջև,
- կազմակերպությունների միջև:

Զինծառայողները, որպես ծառայության մեջ գտնվող մասնավոր անձինք, կարող են իրավական վեճ ունենալ այլ անձանց և կազմակերպությունների հետ: Այսպիսի դեպքեր են, օրինակ, գույքի՝ որպես ժառանգության բաժանման հարցերը ժառանգների միջև, ալիմենտի վճարման հարցերը ամուսինների միջև, հեռախոսային կապի որակի հետ կապված հարցերը բաժանորդի և կապի օպերատորի միջև և այլն:

Վարչական գործերը մասնավոր անձանց (քաղաքացիների և կազմակերպությունների) և պետական մարմինների կամ տեղական ինքնակառավարման մարմինների միջև վեճերն են: Այսպիսի դեպքեր են, օրինակ, ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար տուգանքի հարցերը՝ ընդդեմ ոստիկանության, շինարարական թույլտվության մերժման հարցերը՝ ընդդեմ համայնքի վարչական ղեկավարության և այլն:

Զինծառայության ընթացքում քաղաքացին գտնվում է պետության հետ հարաբերությունների մեջ. այդ հարաբերությունների մի կողմում համազգեստով քաղաքացին է, մյուս կողմում՝ պետության անունից՝ Պաշտպանության նախարարությունը, Գլխավոր շտաբը, իսկ ծառայության վայրերում և ընթացքում՝ այդ պետական մարմինների ներկայացուցիչները՝ հրամանատարները (վերադասները կամ պետերը): Սրանից հետևում է, որ, օրինակ, զինծառայողի աշխատավարձի չվճարման, պաշտոնից ազատման, կարգապահական տույժ տալու հարցերը քաղաքացու և պետական մարմնի միջև վեճեր են և պետք է լուծվեն վարչական դատարանում:

Քրեական գործերը քրեական իրավախախտման՝ հանցագործության քննության հետ կապված գործերն են, որի մի կողմում քաղաքացին է (զինծառայողը), մյուս կողմում՝ իրավապահները (ռազմական ոստիկանություն, քննչական կոմիտե և դատախազություն): Այս գործերը ևս, ի վերջո, քննում և լուծում է դատարանը:

Իր իրավունքներին և պարտականություններին վերաբերող ցանկացած քաղաքացիական, վարչական և քրեական գործով զինծառայող իրավունք ունի, որ գործը քննվի՝

- օրենքով ստեղծված, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից,
- ողջամիտ ժամկետում,
- մրցակցային պայմաններում,
- հրապարակայնորեն:

Հանցագործության համար մեղադրվող զինծառայողն ունի հետևյալ իրավունքները.

- **անհապաղ տեղեկանալ,** թե ի՞նչ հանցանքի կատարման համար է մեղադրվում, այդ թվում՝ մեղադրանքի փաստական մասը, այսինքն՝ իր արարքների նկարագրությունը և իրավաբանական մասը, այսինքն՝ կոնկրետ հանցագործության բնորոշումը,
- **ստանալ իրավաբանական օգնություն,** այդ թվում՝ օգտվել փաստաբանի ծառայությունից՝ խորհրդակցել նրա հետ,
- **պաշտպանվել մեղադրանքից** անձամբ կամ փաստաբանի միջոցով, այսինքն՝ բերել հակափաստարկներ ներկայացված մեղադրական ապացույցների դեմ և փաստարկներ՝ հօգուտ իրեն,
- ***ունենալ բավարար ժամանակ*** և միջոցներ՝ պաշտպանվելու մեղադրանքից, այսինքն՝ ծանոթանալ իր դեմ հավաքված ապացույցներին և ներկայացնել հակափաստարկներ և փաստարկներ՝ հօգուտ իրեն,
- **անվճար օգտվել թարգմանչից**, եթե նա չի հասկանում հայերեն՝ բանավոր կամ գրավոր,
- **լռել և ցուցմունք չտալ**, այդ թվում՝ չխոստովանել հանցագործությունը և իրեն մեղավոր չճանաչել:

Զինծառայողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավոր լինելը չի հաստատվել դատարանի դատավճռով՝ բոլոր ապացույցների, փաստարկների մանրակրկիտ, ճշգրիտ հետազոտմամբ և գնահատմամբ. սա անմեղության կանխավարկածի սկզբունքն է:

Այս սկզբունքը նաև նշանակում է, որ հանցագործության համար մեղադրվող զինծառայողը պարտավոր չէ ապացուցել իր անմեղ լինելը, այլ հակառակը՝ դատախազությունն է պարտավոր ապացուցել նրա մեղավորությունը:

Կարևոր է նշել, որ մի շարք կարգապահական իրավախախտումներ շատ մոտ են քրեական իրավախախտումներին: Օրինակ՝ հրաման չկատարելը կարգապահական խախտում է, իսկ եթե հրաման չկատարելը **էական վնաս է պատճառել**, ապա վերածվում է հանցագործության: Սրանից հետևում է, որ զինծառայողի իրավունքների լիարժեք պաշտպանության նպատակով նա **հենց սկզբից պետք է օգտվի իր վերը նշված նվազագույն իրավունքներից՝ թեկուզև կարգապահական զանցանքների քննության ժամանակ:**

Մասնավորապես, զինծառայողն իրավունք ունի՝

- **իմանալ,** թե ինչ կարգապահական խախտման կատարման համար է մեղադրվում,
- **ստանալ իրավաբանական խորհրդատվություն**,
- **պաշտպանել իրեն մեղադրանքից՝** տալով բացատրություններ, ներկայացնելով փաստարկներ,
- **իրեն մեղավոր չճանաչել** և ինքն իրեն մեղադրող, իր դեմ որևէ բան չասել կամ չգրել:

Հակառակ դեպքում զինծառայողը կարող է, օրինակ, զեկուցագրով կամ բացատրությամբ խոստովանել իր կարգապահական խախտումը, որը հետագայում քրեական գործի շրջանակներում կվերածվի հանցագործության խոստովանության:

Զինծառայողը պետք է իմանա, թե ինչ արարքների համար կենթարկվի քրեական պատասխանատվության:

Սա առաջին հերթին նշանակում է, որ բոլոր **հանցագործությունները պետք է սպառիչ ներառված լինեն քրեական օրենքում**: Դրա հետ մեկտեղ **հանցագործությունների սահմանումները պետք է որոշակի լինեն**, դրանցում չպետք է լինեն անհասկանալի բառեր կամ այնպիսի բառեր, որոնք կարող են տարբեր կերպ հասկացվել՝ կախված իրավիճակից և մարդկանցից: Այս պահանջները բխում են «չկա պատիժ առանց հանցագործության» սկզբունքից:

ՄԱՍՆԱՎՈՐ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿՅԱՆՔԻ, ԲՆԱԿԱՐԱՆԻ ԵՎ ՅԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՅԱՐԳԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔ

Մասնավոր և ընտանեկան կյանքի, բնակարանի և հաղորդակցության նկատմամբ հարգանքի իրավունք

Զինծառայողն ունի իր մասնավոր և ընտանեկան կյանքի, բնակարանի և հաղորդակցության նկատմամբ հարգանքի իրավունք: Թեև զինվորական ծառայության անցնելու պատճառով այս իրավունքներն ինքնըստինքյան որոշ չափով սահմանափակվում են, բայց չեն վերանում:

Մասնավոր կյանքը ներառում է զինծառայողի ֆիզիկական և հոգեկան ամբողջականությունը և ներաշխարհը, նրա անձնական և հասարակական նախասիրությունները, սովորությունները, ապրելակերպը և կապերը:

Ընտանեկան կյանքը ներառում է զինծառայողի հարաբերություններն իր ամուսնու, զուգընկերոջ, ծնողների, քրոջ, եղբոր, տատի և պապի, երեխաների և արյունակից կամ հարազատ այլ անձանց հետ:

Բնակարան ասելով՝ հասկանում ենք այն տեղը՝ կացարանը, որտեղ զինծառայողը մշտապես կամ ժամանակավոր ապրում է, անցկացնում իր կեցության զգալի մասը և կապված է այդ տեղի հետ:

Հաղորդակցությունը ներառում է զինծառայողի կողմից ուղարկվող և ստացվող նամակները, հեռագրերը, էլեկտրոնային, ձայնային հաղորդագրությունները, հեռախոսային խոսակցությունները:

Զինծառայողի այս իրավունքները սահմանափակվում են՝ պայմանավորված հենց զինվորական ծառայության բնույթով և նպատակներով: Այսինքն՝ **ծառայության ընթացքում քաղաքացին չի կարող ապրել նույն կերպ, ինչպես մինչ ծառայությունը կամ ծառայությունից դուրս քաղաքացիական կյանքում,** չի կարող ծառայության ընթացքում ցանկացած ժամանակ հանդիպել կամ խոսել իր ընտանիքի անդամների կամ ընկերների հետ և այլն: Զինծառայողին, օրինակ, **չի թույլատրվում հեռախոսով խոսել կամ հաղորդագրություններ ուղարկել մարտական հերթապահության ժամանակ**, կրել ցանկացած տեսակի հագուստ՝ ոչ զինվորական համազգեստ: Այս սահմանափակումներն անհրաժեշտ են ռազմական արդյունավետության նպատակով, այսինքն՝ դրանք նպաստում են զինծառայության խնդիրների ճիշտ և ժամանակին կատարմանը:

Սակայն, միևնույն ժամանակ, զինծառայողի համար պետք է ստեղծվեն անհրաժեշտ պայմաններ, որպեսզի նա կարողանա կապ պահել իր հարազատների հետ, հաղորդակցվել նրանց հետ, կարողանա

զբաղվել իր սիրած զբաղմունքով, եթե դա համատեղելի է ծառայության հետ և հնարավոր է:

Կին զինծառայողները պետք է բնակվեն այնպիսի կացարանում և պայմաններում, որ կարողանան գոնե նվազագույն չափով բավարարել իրենց անձնական հատուկ կարիքները:

Նույնիսկ զորանոցում զինծառայողին հատկացված տարածքը նրա անձնական, մասնավոր միջավայրն է, և այդ տարածքը չի կարելի կամայականորեն, օրինակ, խուզարկել: Նմանապես նաև չի կարելի գաղտնալսել զինծառայողի հեռախոսային խոսակցությունները կամ կարդալ նրա նամակագրությունը, այնպիսի տեղեկություններ հավաքել նրա անձնական կյանքի մասին, որոնք ոչ մի կապ չունեն նրա ծառայողական պարտականությունների հետ:

Մասնավոր, ընտանեկան կյանքի, բնակարանի և հաղորդակցության նկատմամբ հարգանքի իրավունքին պետության միջամտությունները պետք է՝

նախատեսված լինեն օրենքով՝
հստակ և որոշակի նշելով սահմանափակման պատճառների ցանկը և կարգը՝ տալով նաև բողոքարկման հնարավորություն,

ունենան իրավաչափ նպատակ՝
պաշտպանել պետության, հասարակության անվտանգությունը, տնտեսական բարօրությունը, կանխել անկարգությունը կամ հանցագործությունը, պաշտպանել հանրության առողջությունը կամ բարոյականությունը, այլ անձանց իրավունքները,

անհրաժեշտ լինեն ժողովրդավարական հասարակությունում՝
ձեռնարկված լինեն հասարակական հրատապ կարիքից ելնելով և համաչափ լինեն ակնկալվող արդյունքի համեմատ:

Օրինակ՝ զինծառայողի հեռախոսային խոսակցությունները կարելի է գաղտնալսել **դատարանի որոշմամբ**՝ նրա կողմից հանցանքի կատարումը՝ **պետական գաղտնիքի բացահայտումը** կանխելու համար, կարելի է տեղեկություններ հավաքել զինծառայողի անձնական կապերի և նախասիրությունների մասին նրան **պատասխանատու պաշտոնի նշանակելուց առաջ**՝ պարզելու համար այդ պաշտոնում նրա արդյունավետ աշխատելուն **խանգարող հնարավոր պատճառները և վտանգները**:

ՄՏՔԻ, ԽՂՃԻ ԵՎ ԴԱՎԱՆԱՆՔԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Մտքի, խղճի և դավանանքի ազատության իրավունք

Խղճի, մտքի և դավանանքի ազատության իրավունքը նշանակում է, որ **ամեն մարդ ինքն է որոշում, թե ինչ հավատքի կամ կրոնի է դավանում, կամ ընդհանրապես չի դավանում որևէ կրոնի, այլ առաջնորդվում է իրեն հարազատ ինչ-որ գաղափարախոսությամբ, աշխարհայացքով:** Մտքի, խղճի և դավանանքի ազատության իրավունքը ներառում է նաև դրանցից բխող **արարողություններ կատարելը** (օրինակ՝ աղոթելը), **կրոնական հագուստ կամ պարագաներ կրելը, միայնակ կամ այլ անձանց հետ ծեսեր կատարելը** և այլն:

Զինծառայողները ևս ունեն այս իրավունքները, սակայն դրանք կարող են սահմանափակվել ծառայության ընթացքում՝ պարտականությունները կատարելու ժամանակ:

Զորակոչիկները՝ դեռևս ծառայության չանցած զինապարտները, ևս ունեն այս իրավունքները: **Եթե քաղաքացու կրոնական հայացքները թույլ չեն տալիս նրան ծառայել զինված ուժերում (կրել համազգեստ, զենք, լինել զինվորական ենթակայության տակ և այլն), ապա, միևնույն է, նա պետք է կատարի պետության պաշտպանությանը մասնակցելու իր պարտականությունը**, և նրան հնարավորություն պետք է տրվի անցնել այլընտրանքային ծառայություն:

ՈՉ ՈՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԻ ՍՏԻՊԵԼ
զինծառայողին հրաժարվել իր կրոնից, դավանանքից, համոզմունքներից կամ փոխել դրանք:

Այլընտրանքային ծառայությունը լինում է երկու տեսակի.

- այլընտրանքային զինվորական ծառայություն,
- այլընտրանքային աշխատանքային ծառայություն:

Այլընտրանքային զինվորական ծառայությունը անցնում է զորամասերում, սակայն այլընտրանքային զինծառայողները չեն ներգրավվում, օրինակ, մարտական հերթապահության կամ առաջադրանքների կատարման: Այլընտրանքային աշխատանքային ծառայությունը պետք է լինի քաղաքացիական աշխատանք՝ ոչ զինվորական հաստատություններում, վայրերում և առանց զինվորական հսկողության, հրամանատարական ենթակայության:

Կարևոր է, որ այլընտրանքային ծառայությունը, զինվորական ծառայության համեմատ, չլինի չափազանց երկար (օրինակ՝ երեքուկես կամ չորս տարի), այլ՝ առավելագույնը մեկուկես անգամ ավելի երկար, այսինքն՝ երեք տարի:

Զինծառայության ընթացքում **պետությունը կարող է սահմանափակել խղճի, մտքի և դավանանքի ազատության իրավունքը՝ հանուն հանրային անվտանգության:** Սակայն սահմանափակումը պետք է հիմնավոր լինի և նպատակ ունենա պաշտպանել ավելի կարևոր արժեքներ, քան մեկ անձի իրավունքն է:

Զինծառայողը չի կարող, օրինակ, մարտական հերթապահության ընթացքում թողնել դիտակետը և աղոթել, կամ չի կարող մարտական առաջադրանքի ժամանակ կրել այնպիսի կրոնական պարագաներ, որոնք կարող են առավել վտանգի տակ դնել իր կամ այլ զինծառայողների կյանքը:

Սակայն դրա հետ մեկտեղ հրամանատարը, օրինակ, չի կարող զինծառայողին պարտադրել մասնակցել ինչ-որ կրոնական արարողությունների կամ հանգստի ժամերին արգելել կարդալ իր դավանանքի մասին գրքեր, զինծառայողից վերցնել նրա կրոնական փոքր զարդը և այլն:

Հրամանատարությունը պարտավոր է այնպես անել, որ տարբեր կրոնների դավանող, տարբեր հայացքներ ունեցող զինծառայողները ապրեն համերաշխ միջավայրում՝ նրանցից որևէ մեկին չտալով առավելություն մյուսի համեմատ՝ կրոնական հայացքների պատճառով:

8

ԱՐՏԱՀԱՅՏՎԵԼՈՒ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Արտահայտվելու ազատության իրավունք

Զինծառայողներն ունեն կարծիք արտահայտելու, տեղեկություններ ստանալու և տարածելու իրավունք:

Զինծառայողն իրավունք ունի **տեղեկություններ ստանալ բաց աղբյուրներից՝ թերթերից, էլեկտրոնային լրատվամիջոցներից, հեռուստատեսությունից** և այլն: Իհարկե, տեղեկություններ ստանալը **չպետք է կատարվի անմիջականորեն պարտականությունները կատարելու ժամանակ**, օրինակ՝ ֆիզիկական կամ մասնագիտական պատրաստության պարապմունքի, մարտական առաջադրանքի ընթացքում:

Զինծառայողը կարող է ստանալ իրեն կամ իր ենթականերին վերաբերող տեղեկություններ, փաստաթղթեր, օրինակ՝ առողջական վիճակի հետազոտության արդյունքները, կարգապահական վարույթի փաստաթղթերը, ծառայության վնասակար պայմանների կամ մարտական առաջադրանքի վտանգների մասին տվյալները և այլն: Միաժամանակ, **զինծառայողը պետք է զերծ մնա այնպիսի տեղեկություններ հավաքելուց, որոնք կապ չունեն իր պարտականությունների հետ, անհրաժեշտ չեն և իրեն հասանելի չեն**, օրինակ՝ այլ զորամասի զինատեսակների և քանակի մասին:

Զինվորական ծառայության ընթացքում սահմանափակվում են նաև կարծիք արտահայտելու, տեղեկություններ տարածելու իրավունքները:

Կարծիք արտահայտելիս կամ տեղեկություններ տարածելիս զինծառայողը պարտավոր է.

չհրապարակել իրեն հայտնի ռազմական գաղտնիքը՝ որևէ մեկին չհայտնել զորքերի քանակը և տեղակայումը, սպառազինության ծավալը, տեսակները, տեղաշարժը, ռազմական գործողությունների պլանները և այլն,

լինել քաղաքականապես չեզոք՝ հրապարակայնորեն կամ այլ զինծառայողների մոտ չքննադատել քաղաքական իշխանություններին, քարոզչություն չանել որևէ քաղաքական գործչի համար կամ դեմ և այլն,

լինել մասնագիտորեն զուսպ՝ հրապարակայնորեն չքննադատել իր հրամանատարների գործողությունները, որոշումները կամ հրամանները, վերադասների, ստորադասների կամ հավասար ծառայակիցների առջև վատ չարտահայտվել զինվորական կարգապահական կանոնների մասին և այլն,

լինել անձնապես զուսպ՝ չվիրավորել այլ զինծառայողներին, նրանց ներկայությամբ չքննարկել անպարկեշտ թեմաներ և այլն:

Զինծառայողն իրավունք ունի և պետք է բարձրաձայնի իր կամ այլ զինծառայողների իրավունքների խախտումների մասին: Զինծառայողը չի կարող պատժվել դրա համար:

9

ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐ ԿԱԶՄԵԼՈՒ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՆԴԱՄԱԿՑԵԼՈՒ, ԸՆՏՐԵԼՈՒ ԵՎ ԸՆՏՐՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ

Միավորումներ կազմելու և դրանց անդամակցելու, ընտրելու և ընտրվելու իրավունք

Զինծառայողը կարող է իր իրավունքները պաշտպանել ինչպես անհատապես, այնպես էլ այլ զինծառայողների հետ համատեղ: **Իրենց իրավունքները կոլեկտիվ պաշտպանելու համար զինծառայողները կարող են ստեղծել արհեստակցական կամ զինվորական միություններ**: Կարևոր է, որ զինծառայողի անդամակցությունն այսպիսի միություններին լինի **կամավոր՝** առանց որևէ պարտադրանքի հրամանատարության կամ ծառայակիցների կողմից:

Զինծառայողների միությունները ոչ բոլոր երկրներում են թույլատրվում՝ հաշվի առնելով, որ զինծառայողների խմբակային բողոքները կարող են վտանգ ներկայացնել զինվորական կարգապահության, ազգային անվտանգության համար:

Այս պատճառով զինվորական կամ արհեստակցական միություններում պետք է՝

- **լինեն բացառապես զինծառայողներ**, և միությունները կապված չլինեն այլ քաղաքացիական միությունների հետ, որպեսզի զերծ լինեն որևէ արտաքին ազդեցությունից,
- **արգելվեն բոլոր տեսակի խմբային բողոքի ակցիաները** և գործադուլները, որպեսզի չառաջանա զինվորական արդյունավետությանը կամ ազգային անվտանգությանը սպառնացող որևէ վտանգ:

Հայաստանում զինծառայողներին արգելվում է ստեղծել արհեստակցական կամ զինվորական միավորումներ կամ լինել դրանց անդամ:

Զինծառայողը կարող է լինել նաև քաղաքական կուսակցության անդամ: Սակայն **զինծառայողի քաղաքական-կուսակցական գործունեությունը ծառայության ընթացքում խիստ սահմանափակվում է: Ծառայության ժամանակ զինծառայողը չպետք է քաղաքական քարոզչություն իրականացնի, փորձի ազդել իր ծառայակից (վերադաս կամ ստորադաս) ընկերների վրա, քաղաքական քննադատության ենթարկի կամ գովասանքի արժանացնի որևէ քաղաքական գործչի կամ քաղաքական կուսակցության, այդ թվում՝ իր կուսակցությանը**:

Զինծառայողը կարող է մասնակցել ընտրություններին որպես թեկնածու՝ անհատապես կամ որևէ քաղաքական կուսակցության կազմում: Սակայն նա պետք է դադարեցնի իր ծառայությունը զինված ուժերում ինչպես քաղաքական քարոզարշավի ընթացքում, այնպես էլ ընտրություններում հաղթելու և համապատասխանաբար որևէ պաշտոն ստանձնելու դեպքում:

Աշխարհի քիչ երկրներում է թույլատրվում զինծառայողին մասնակցել ընտրություններին որպես թեկնածու: Պետությունը, հաշվի առնելով իր ռազմական կարիքները, ազատ է որոշել այս հարցում՝ օրենքով թույլատրել զինծառայողներին՝ որպես թեկնածու, մասնակցել ընտրություններին, թե՝ ոչ:

Հայաստանում զինծառայողն իրավունք չունի իր թեկնածությունն առաջադրել ընտրություններում: Զինծառայողը նաև չի կարող լինել վստահված անձ, ընտրական հանձնաժողովի անդամ կամ դիտորդ:

Զինծառայողն ունի ընտրելու իրավունք: **Պետությունը պետք է պայմաններ ստեղծի, որ զինծառայողը կարողանա մասնակցել քվեարկություններին**: Բոլոր զինծառայողներն իրավունք ունեն քվեարկել ազատ և գաղտնի. սա նշանակում է, որ **ոչ ոք չի կարող զինծառայողին պարտադրել մասնակցել քվեարկությանը, կամ քվեարկել այս կամ այն թեկնածուի, կուսակցության օգտին, և ոչ ոք չի կարող զինծառայողին ստիպել հայտնել, թե ում է նա ընտրելու կամ արդեն ընտրել:**

Ընդ որում, ընտրելու հնարավորություն պետք է ունենան բոլոր զինծառայողները՝ զինվորական հոսպիտալում գտնվող, մարտական հերթապահություն իրականացնող, խաղաղապահ առաքելությամբ այլ երկրում գտնվող:

Միակ բացառությունը, որի դեպքում զինծառայողը ստիպված կլինի չմասնակցել քվեարկությանը, և դա չի համարվի նրա իրավունքի խախտում, եթե նա քվեարկության օրը պետք է հրատապ և կարևոր մարտական առաջադրանք կատարի, որը հնարավոր չէ կատարել այլ օր կամ քվեարկության ժամերից դուրս: Այս դեպքում պետության պաշտպանությունը, ազգային անվտանգությունն առավել կարևոր են, քան մեկ կամ մի խումբ զինծառայողների ընտրելու իրավունքը:

ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԳԵԼՔ

Խտրականության արգելք

Խտրականությունը՝

- **տարբերակված վերաբերմունքն է միևնույն կամ միանման վիճակում գտնվող զինծառայողների նկատմամբ, կամ**
- **միևնույն կամ միանման վերաբերմունքը տարբեր վիճակներում գտնվող զինծառայողների նկատմամբ**

Ընդ որում, այդ անարդար վերաբերմունքի պատճառը զինծառայողի **սեռն է, ռասան, ազգությունը, կրոնը, սոցիալական վիճակը, քաղաքական կամ այլ հայացքները և այլն**:

Զինծառայողի նկատմամբ հրամանատարության **վերաբերմունքը պետք է հիմնված լինի միմիայն նրա ունակությունների՝ գիտելիքների ու հմտությունների, վարքի՝ կարգապահության, պարտականությունները ճիշտ և ժամանակին կատարելու փաստի վրա, այլ ոչ թե վերը նշված հատկանիշների վրա:**

Զինծառայության մեջ խտրականություն են, օրինակ՝

- միևնույն մարտական առաջադրանքը կատարած **կին զինծառայողին ավելի քիչ պարգևավճար տալը, քան տղամարդուն**,
- միևնույն զորատեսակում ծառայող, միևնույն կոչումը, մասնագիտությունն ու առողջական վիճակն ունեցող **սոցիալապես անապահով ընտանիքից** շարքային զինծառայողին **ավելի շատ աշխատանքներ հանձնարարելը, քան սոցիալապես ապահովված ընտանիքից** շարքային զինծառայողին,
- նույն մարտական դիրքում հերթապահություն իրականացնող **հայ** զինծառայողին **ավելի երկար հանգստի ժամանակ տալը**, քան **եզդի** զինծառայողին,
- նույն կարգապահական խախտումը կատարած **աթեիստ** շարքայինին **ավելի խիստ տույժ տալը**, քան **հայ առաքելական եկեղեցու հետևորդին**:

Խտրականությունը զինծառայողների հանդեպ ԱՐԳԵԼՎՈՒՄ Է. դա նրանց իրավունքների կոպիտ խախտում է:

Հրամանատարները ոչ միայն իրենք պետք է ոչ մի դեպքում խտրական չվերաբերվեն զինծառայողներին, այլև պետք է պայմաններ ստեղծեն, որ իրենց ստորադաս զինծառայողների միջև հարաբերությունները և մթնոլորտը զերծ լինեն խտրականությունից:

Զինծառայողների հանդեպ տարբերակված վերաբերմունքը պետք է հիմնավոր լինի: Զինծառայության մեջ խտրականություն չէ, օրինակ՝

- առողջական խնդիրներ ունեցող և սահմանափակումներով ծառայող զինծառայողին ավելի թեթև ֆիզիկական վարժություններ տալը,
- կին զինծառայողին հղիության արձակուրդ տալը,
- կին և տղամարդ զինծառայողների համար ֆիզիկական պատրաստականության տարբեր նորմատիվներ սահմանելը:

ԱՄՓՈՓՈՒՄ

Ամփոփում

Զինծառայողի իրավունքները բարձրագույն արժեք են, և պետությունը պարտավոր է առավելագույն ջանքեր գործադրել՝ իրավունքների խախտումները կանխելու, իսկ խախտումներ տեղի ունենալու դեպքում՝ դրանք քննելու և մեղավորներին պատժելու համար

Զինծառայողի իրավունքները կարելի է սահմանափակել միայն բացառիկ դեպքերում, եթե այդ սահմանափակման նպատակը ազգային անվտանգության, պետության տարածքային ամբողջականության, հասարակության անվտանգության կամ այլ անձանց իրավունքների պաշտպանությունն է

Զինծառայողների որոշ իրավունքներ բացարձակ են, այսինքն՝ ոչ մի դեպքում չեն կարող սահմանափակվել՝ անկախ պատճառներից և նպատակներից

Զինվորական կարգապահության և մարդու իրավունքների միջև ՉԿԱ հակասություն. զինվորական կարգապահությունը, սահմանելով ծառայություն անցնելու կանոնները, պետք է այդպիսով պաշտպանի մարդու իրավունքները՝ զինվորական կյանքի առանձնահատուկ պայմաններում

Զինծառայողների իրավունքների ցանկացած խախտման մասին, թեկուզ անանուն, ԱՆՊԱՅՄԱՆ պետք է հայտնել իրավապահներին:

Նշումներ

Մարդու իրավունքների և իրավունքի գերակայության տնօրինության մշակած սույն ձեռնարկի նպատակն է բացահայտել «առաջին սերնդի» մարդու իրավունքների իմաստը՝ զինվորական ծառայության համատեքստում:

Սույն նյութը կարող է օգտակար լինել զինված ուժերում ծառայող պարտադիր և պայմանագրային զինծառայողների, զորակոչիկների, նրանց ընտանիքի անդամների, հրամանատարական կազմի, զինվորական ոլորտի իրավապահ ծառայողների և, ընդհանրապես, զինված ուժերում մարդու իրավունքներով հետաքրքրվող մարդկանց համար:

Ձեռնարկի նպատակն է բարձրացնել հանրության, առաջին հերթին՝ զինծառայողների իրազեկությունը մարդու իրավունքների վերաբերյալ՝ նպաստելով Հայաստանի զինված ուժերում մարդու իրավունքների առավել արդյունավետ պաշտպանությանը:

Եվրոպայի խորհրդի գրասենյակ Երևանում
«Էլիտ պլազա» բիզնես կենտրոն
Մովսես Խորենացու փող., 15 շենք, 5-րդ հարկ
Երևան 0010, Հայաստան

https://www.coe.int/national-implementation

HYE

www.coe.int

Եվրոպայի խորհուրդը մայրցամաքի՝ մարդու իրավունքների հարցերով զբաղվող առաջատար կազմակերպությունն է: Նրա կազմում են 47 անդամ պետություններ, այդ թվում՝ Եվրոպական միության անդամ բոլոր պետությունները: Եվրոպայի խորհրդի անդամ բոլոր պետությունները միացել են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային՝ որպես մարդու իրավունքների, ժողովրդավարության և իրավունքի գերակայության պաշտպանությանն ուղղված միջազգային փաստաթղթի: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վերահսկում է Կոնվենցիայի իրականացումն անդամ պետություններում:

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE